

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի կես տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է լ է Ֆ օ ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկի.
Տ է լ է Ֆ օ ն № 253.

ՀԱՅԵՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՅՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԱՌԱՋԻՆՅՈՒՆ 1905 ԹԻՖԼԻՍԻՆ

(33-րդ ՏԱԻԻ)

«ՄՇԱԿ»-ը ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿԻ ԵՒ ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂԱՌԹԵԱՐԳ

ամեն օր, բացի տօներէն յաջորդող օրերէն:

ԲԱՅՎԱՆՈՐԴԱԳՐՈՒՄ. «Մշակ» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ ամսովնը նոյն-
աչէս 10 ռ., տասն ամսովնը՝ 9 ռ., ինն ամսովնը՝ 8 ռ., 8 ամսովնը՝ 7 ռուբլի, եօթ և կից
ամսովնը՝ 6 ռ., հինգ ամսովնը՝ 5 ռ., չորս ամսովնը՝ 4 ռ., երեք ամսովնը՝ 3 ռ., երկու
ամսովնը՝ 2 ռ. և մի ամսովնը՝ 1 ռուբլի:

ԱՐՏԱՍՏՆԱԿԱՆ ԲԱՅՎԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է
վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի
բաժանորդները՝ 10 ռուբլի:

«Մշակ» գրվել կարելի է ՊԵՏԱԳՐԱՏԱՆԸ. (Բաղարնայա և Բարսեղայա փողոցներէ
անկիւն): Մտորագրել կարելի է միայն ամսի 1-ին:

Կայտարարութեան ուղիւ թղթադրուի «ՄՇԱԿ»-ը գրվելու համար և առնաստիճան համարներ
և ծրարներ ուղարկելու, պէտք է գրվել հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция «МШАКЪ»,
խոս արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւնները ընդունվում են ընդամենը լեզուներով:

Ա. Պ. Ռ. Կ. Բ. Ա. Ն. Ո. Գ. Դ. Ե. Զ. Է. Ը. Թ. Ռ. Ե. Վ. Ո. Ի. Մ.

Երկարատե և ծանր հիւանդութիւնից յետոյ ամսին 17-ին վախճանվեց

ԳԵՈՐԳ ԳԱՍՊԱՐԵԱՆ ՄԵԱՑԱԿԱՆԵԱՆԸ

Այս մասին ցաւօր արտի յայտնում են ազգականներին և ծանօթներին—ամուսինը՝ Մա-
րիամ Մարգարեան, որդիք Ստեփան, Արթուր, Նազեհ և Տիգրան Գեորգիաններ
և եղբայր Սարգիս Գասպարեան Մեայրապետեանները: Յուզարկաւորութիւնը տեղի
կունենայ դեկտեմբերի 19-ին, կիրակի օրը, առաւօտեան ժամի 10-ին, իր բնակարա-
նից, Չալչալաձեան փողոցի 14 հէպի Նորաշէնի ա. Աստուածածին եկեղեցին, սյու-
նակից Խոյիվանքի գերեզմանատունը: 1—2

Կիրակի, դեկտեմբերի 19-ին քաղաքացիական ինժէնէր

ԱԼԷԿՍԱՆԴՐ ՀԷՋՈՒԹՎԻԶ ՀԷՋՈՒԲԵԱՆԻ

Մահացած քառասունը օրը Ձիգրաշէնի ա. Աստուածածին եկեղեցում (Միջ-փողոցում)
հողմանգութեան պատարագ կը մատուցվի և հոգեհաղթատ կը կատարվի, որի մասին
յայտնում են հանդուգաւոր մայրը Յիւսէպիանա Ալեքիբաճեան Հէջոբեան, եղբայր—
Կոստանդին Հէջոբեան փողոցի 14 հէպի Նորաշէնի ա. Աստուածածին եկեղեցին, սյու-
նակից Խոյիվանքի գերեզմանատունը: 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պատերազմական բեմը.—Ներքին ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Մամուլ. Թատրոն և երաժշտութիւն.
Բժ. Գ. Կաճաճեանի յիշատակին Մալաշից
Թիֆլիս բերվող ջրանցքի մասին. Նամակ Խըմ-
բայրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՍՏՆԱԿԱՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը.—Հեռագիր-
ներ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԲԵՄԸ

Երեկվայ մեր յօդուածում մենք տա-
ցինք, որ պատերազմը կը դառնայ մի
ծանր ժառանգութիւն առաջիկայ 1905
թվականի համար: Ռուսական և եսպո-
նական զօրքերը կանգնած են միմեանց
դէմ մի կողմից Մուկաչէնի մօտ Շախ-
դեանգրի տարածութեան վրա, իսկ միւս
կողմից Պորտ-Արաուրի շրջակայքում, որ-
տեղ դեռ մնացել են ամուր բերդեր և
մարտկոցներ:

Բերլինի «Lokal Anzeiger» թերթի յա-
տուկ թղթակիցը, հիմնվելով ռուսական
շտաբի տեղեկութիւններ վրա (տես Խ. Բ.)
հեռագրում է իր լրագրին, որ եսպոնա-
ցիները պատերազմական դաշտում ունեն
ներկայումս 219,000 հոգի զօրք 816 թըն-
դանօթով և մայր երկրում 110,000 հոգի
318 թընդանօթով: Չօրքի թիւը լրացնե-
լու համար եսպոնացիները գրվել են զին-
ւորակոչի և ժողովել են նաև անվարձ-
ների մեծ թիւ, որոնց պէտք է այժմ

վաճեցնել: Դրանց շարքերում պատա-
հում են կօթեպցիներ, չինացիներ և ֆո-
մօղացիներ:

Ամենամեծ վտանգներից մէկը պատե-
րազմող կողմերի համար այն կը լինէր,
եթէ ձմեռային ներկայ դաժան սառնամա-
նիքների ժամանակ զօրքերը դուրս քլլէին
առք գետնափորներից: Չօրքը, մասնավա-
ր լինելով ցրտի, կենթարկվէր մեծ գրկանք-
ների: Հակառակ կողմերը ներկայումս
կանգնած են միմեանց դէմ և չեն վստա-
հանում հեռանալ իրանց տար բնակարան-
ներից, երկու կողմից բացօթեայ մնալու
վտանգից:

Ռուսները յոյս են տածում, որ սառ-
նամանքները, իրեն հին զինակիցներ
(նախկին պատերազմների ժամանակ) կա-
շակցեն նրանց և հնարաւորութիւն կը
տան դժուար դրութեան մէջ գցելու ես-
պոնացիներին, սակայն գեւ շարժումներ
չեն անում, որովհետեւ թէ զինւորական
և թէ ռուսաստի միջերկրների համար նա-
խապատրաստութիւնները դեռ չեն լրա-
ցած: Ռուսաց բանակը սպասում է նոր
զօրքերի և յոյս ունի չորս ամիս յետոյ
աւելացնել իր ոյժը 100,000 հոգով և
այդպիսով եղած կորուստները փխարի-
նել թարմ, երիտասարդ զինւորներով:

Անկասկած չը պէտք է հրապարակել զօ-
րի թւական ոյժով և դաշտ ուղարկել
կարելիին չափ շատ մարդ: Կարևոր է, որ
զօրքը իր պատրաստութեամբ և իր հմուտ-
ութեամբ լինի գերադաս: Պատմութիւնը

ցոյց է տալիս, որ նշանաւոր զօրապետ-
ները փայլուն յաղթութիւններ են տարել
ոչ այնքան իրանց զօրքի մեծութեամբ,
որքան զինւորական ոյժի որակութեամբ:

Ներկայ տարվայ պատերազմական գոր-
ծողութիւններից կուող կողմերը, ան-
շուշտ, կօզմվեն իրանց թերութիւնները
ուղղելու և առաջիկայ տարվայ ընդհա-
րուսների մէջ ռազմագիտական նոր հըմ-
տութիւն և զինւորական նոր ոյժ ցոյց
տալու համար:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Իրանց սպի, իրանց ժողովրդի ցաւերով
տապակոյ հրապարակ խօսքերից շատերը
յաճախ ստիպված են լինում թողնել հրապա-
րակական ծանր ու լուրջ խօսքը և դիմել բա-
նաստեղծութեան: Այս թուրքը, անշուշտ, սի-
րող սրտի անհուն եռանդից է առաջանում:
Յայտնի է, որ մանր ու բարակ դատողու-
թիւններից աւելի մարդկանց ականջի ու սր-
տի վրա ազդում է բանաստեղծութիւնը: Եւ
բանաստեղծութիւնը—այս էլ յայտնի է—մի-
այն սոխակի, վարդի, լուսնակի լեզուն չէ.
նա հասարակական ցաւեր ու վշտեր էլ է
հնչեցնում ազգու, ցնցող շնչերով: Եւ ահա
նրա օգնութեան էլ է դիմում հրապարակա-
խօսը: Այդ դիմողներից մէկն է և «Զաւիթ»
լրագրի աշխատակից պ. Աղաբեկը: Տարին
տասնեկու ամիս նա գրում է յօդուածներ
մասնագիտական մտաւոր և կուլտուրական
յնտանգութեան մասին, ամեն անգամ նա,
անխնայ ու անզաղար, միջոցներ է առաջար-
կում թէ ինչպէս կարելի է և ինչպէս պէտք է
այդ խեղճ դրութիւնից դուրս գալ: Քարոզչի
ամբիւնը չէ բաւականացրել նրան և ահա նա
հնարել է մի ամբողջ բանաստեղծութիւն—
«Թըրքուստ օրօրացային փրկիչը»: Գովում ենք
թուրք հրապարակախօսների եռանդը: Բայց
միայն եռանդը բաւական չէ մի կարգին բա-
նաստեղծութիւն գրելու համար: Սիրավառ պ.
Աղաբեկը—աւելորդ եռանդից, անշուշտ մոռա-
ցել է, որ բանաստեղծութեան մէջ էլ ամենից
առաջ պահանջվում է ընկալնութիւն: Մոռա-
նալուց դուրս է եկել այսպիսի մի բան: Նըս-
տած է թըրքուստ իր օրգոն օրօրոցի մօտ և
հարգում է:

Կենսըքը քեզ համար ուրախութիւն ու
երջանակութիւն չի լինի, ինչպէս ուրիշների
համար, այլ մի լուծ, մի անտանելի բեռ,
որի հետ դու նայն իսկ չես էլ իմանայ թէ
ինչ անես: Երկրքը քեզ բախտ չի տալ-
լու նրան չես գտնի ոչ մի տեղ,—ոչ քո
մէջ, ոչ քո ընտանիքում, ոչ հասարակու-
թեան մէջ: Կենսըքը վերջ է վերջոյ կը
տանջէ քեզ, և դու, գլուխ կորցնելով, կը
սկսես դէս ու դէն ընկնել իրեն անխել,
իրեն կատաղի շուն. դու կը կծես ամեն
մէկին, ով կը մօտենայ քեզ, իսկ յետոյ կը
գտնվի մէկը, որ աւելի խելաւ կը լինի քե-
զանց և նա քեզ կապաւէ՛ քեզ ճնշող
կենսըքից:

Գուցէ կենսական ճշմարտութիւն կայ
այս օրօրացային երգի մէջ: Բայց ամբողջ
հարցն այն է՝ կարճ է մի մայր, մի խեղճ
ու ազգա թըրքուստ, այսպէս վերաբերվել իր
զաւակի ապագային: Դա, այն, օրօրացային
երգ է բայց պէտք էր, բնականութեան հա-
մար, որ նրան երգողը մի մայր չը լինէր, այլ
հէնց նոյն իսկ մի հրապարակախօս ինտե-
լիգենտ թուրք: Մայրը իր օրդուն, այն էլ
օրօրոցի մէջ փաթաթված օրդուն, միայն
բարի ու գեղեցիկ ապագայ կը կամենայ: Եւ
զարմանում ենք. ինչու պ. Աղաբեկը իր բա-
նաստեղծութեան վերնագրերը չէ գրել. «Ժմ օ-
րօրացային երգերը»: Այդ ժամանակ նրա եր-
գը հասկանալի կը լինէր...

Հայոց աղբառ գրականութեան վտիտ, ան-
արին մարմին կապած են բազմաթիւ տղրուկ-
ներ, որոնք ծծում են նրա հիւթերը, սկսա-
նում են նրա առանց այն էլ խաւար օրը: Այս

երողութիւնը մենք շատ վաղուց գիտենք,
Բայց որքան էլ առատ ու տխուր փաստեր
տեսած ու լսած լինենք, դարձեալ չենք կա-
րող չապշել այն նոր փաստի վրա, որ հա-
ղորդում է «Новое Обозрение» լրագրի: Ահա
ինչ ենք կարողում նրա երէկվայ համարում:

Եղիպոսի Ալեքսանդրի քաղաքում հրա-
տարակոյ «Արտէմիս» հայ ամսագրի խմբ-
ագրութիւնը հետեւեալ խարեութեան զոհն
է դարձել: Ոմն Շահ-Մուրադեան՝ գրվել է
այդ խմբագրութեան մի նամակով, որի մէջ
առաջարկել է ձրի ծառայութիւն տարածե-
լու ամսագիրը Բագուի մէջ: Նամակը գրե-
ված էր «Ա. Բ. Մանթաշեան և ընկ.» Ձառ-
րաթի նախագիտութեան քաղաքական գրասենեակի
տպագրութեան թղթի վրա և նամակի հեղինա-
կի այդտեղ իրան անուանել է «գրասենեա-
կի գանձագանձութիւն»: Առաջարկութիւնը ըն-
դունվեց մեծ շնորհակալութեամբ և կարծե-
ցեալ օրիորդը յայտարարվեց «Արտէմիսի»
Բագուի գործակալ: Նոր գործակալի գոր-
ծունէութիւնը անյապաղ երևան եկաւ, ո-
րովհետեւ խմբագրութիւնն ստացաւ նրանից
առաջարկութիւն ուղարկելու ամսագրի հա-
րկը օրինակներ Բագու, զանազան ան-
ձանց: Ամսագիրը ուղարկվում էր կանոնա-
ւոր, բայց փողերի մասին գործակալը խո-
րին լուծելու էր պահպանում: Վերջ ի
վերջոյ պարզվեց, որ Շահ-Մուրադեանը հա-
ւաքելով մօտ 500 ռուբլի, կերել է: Դատա-
տանական գործ է սկսվել:

Ահա ինչ պայմաններ է մէջ պիտի խաչվի
ու տանվի հայ ամսագրի: Ահա ինչպէս են
բամում հայ մամուլի, գրականութեան վերջին
հիւթերը: Եւ եթէ կայ փոքր ինչ միջառա-
կան բան, այն է, որ դոնէ այս անգամ ծոց-
ներից մէկը դատարանի առաջ կը հանվի:
Մինչև այժմ գրականութեան արմինքն կապած
տղրուկները անպատիժ էին մնում...

«Прибалт. Листокъ» լրագրի նախկին խմ-
բագիր Մ. Լիսիցին «Рус. Старина» ամսագ-
րում հաղորդում է իր յիշողութիւնները այն
ժամանակը շախի մասին, երբ միջոցների ձեռք
առնվեցին Պրիբալտեան երկրը ռուսացնելու
համար: Ամենավտանգաւոր գերմանացիներին
թուում էր ռուսաց դատարանի մոցնելը, սա-
կայն նրանք շուտով հաշտվեցին այդ բեֆօրմի
հետ, համոզվելով, որ ռուս դատաւորները
կրթված մարդիկ են և ամենին չեն աշխա-
տում հովանաւորել էստերին և լատիշներին
ի զնա գերմանացիների և արգելութեան:
Սակայն մի բանի դատաւորները, մասնաւոր
լեհական թագաւորութիւնից փոխադրվածնե-
րը, իրանց կոչման բարձրութեան վրա չէին
կանգնում: Լիսիցինը պատմում է:

Օրինակ, հայտարար դատաւորների հա-
մաժողովներից մէկում կար մի նախագահ,
որը սատարաւորութեամբ չէր կարողանում
վարել ոչ մի նիստ, որի մէջ մասնակցում
էին, որպէս սեղադրեաներ կամ վկաներ,
էստոնացի հասարակ գիւղացիներ: Վերջա-
պէս ստացեք այդ ապուշին, որ նա դարձեւ
գլխից դուրս տալ,—աղաղակում էր նախա-
գահ թագաւորի վրա, երբ ռուսերէն չը
հասկացող, բայց շատախօս գիւղացի էստոն-
ցին սկսում էր իր ցաւերը պատմել դատա-
ւորներին սեղանի առաջ:

Ճիշդ է, այդ նախագահը հիւանդ և ծա-
ռայութիւնից տանջված մարդ էր, բայց
տեղապան կուլտուրական հասարակութիւնը
ապշում էր դրա լեզուի այդպիսի անզուսպ
արտայայտութիւնների վրա:

Սակայն, միայն դատաւորական վար-
չութեան մէջ չէին պատահում այդպիսի ան-
ձիւք: Եւ յիշում եմ, օրինակ, մի մանկա-
վարժի, որը զեկակարում էր ռուսացական
կոչման համար պատրաստվող սեմինարիստ-
ների գրագիտութիւնը: Այդ մանկավարժը
սրտամտաւորաբար ստորացնում էր իր ա-
շակերտները մարդկային արժանապատու-
թիւնը, իւրաքանչիւր քայլափոխում կրկնում
էր, որ «չունենանք ապուշներ են բնու-
թեանից», որ «եթէ ուսանեք նրանց չը
վերցնէին իրանց պետութեան Օստրեյակա
նահանգների մէջ, նրանք կը կորչէին» և
այն: Ստացվեց ամենանողբալի հետեւեալ.
աշակերտները սեմինարիայից դուրս էին
բերում ամառային ոչ միայն դէպի իրանց
դատարանը, այլ և դէպի այն ամենը, ինչ
որ ռուսական էր: Եւ շատ էին այն ժամա-
նակ այդպիսի անհեթեթ ռուսացողներ, ո-
րոնք փայցնում էին ռուսական գործը:

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

(Հայուհեաց ընկերութեան երեկոյթը.—Տօլստօի «Ես-
րուքիւն» վէպի փոխադրութիւնը բեմի վրա.—Պապա-
յանի բեմադրութիւնը.—Սիւրանոյշի 30-ամեակը.—Մանկա-
կան ցերեկոյթ):

I

Յիշեցնում ենք, որ այսօր երեկոյեան թիֆ-
լիսի ժողովարանում տեղի կունենայ թիֆլի-
սի հայուհեաց ընկերութեան երեկոյթը: Աւե-
լորդ չենք համարում կոնցերտային բաժնի մա-
սին տալ հետեւեալ տեղեկութիւնները:

Երգչուհի տիկին Սվետլանա Դորգանեան
(Տէրեան Դորգանեանի քույրը) կերպէ «Կարմէն»
օպերայից և Գլինկայի «Կասկածը»: Բացի այդ
Յուսիկի մասնակցութեամբ կը կատարէ Մա-
սլենէի «Էլիզաբէթ»: Օր. Ե. Մատիսովա կ'կա-
րդայ բանաստեղծ Բալմոնդի հեղինակութիւն-
ներից «Թաւառեցին» ոտանաւորը:

Ձուլակահար Վասիլիեվ կը նուագէ Սարա-
սատի «Andaluziana», Տօմէի «Andante reli-
gioso» և Վենետիկու d—dur պօլսէզը: Եր-
գիչ Բարխուդարեան կերպէ օպերային կտոր-
ներ և օրօրոցի երգ: Դերասան Արմէնեան
կարտասանէ հայերէն Պէշիքթաշեանի «Եղ-
բայը ենք մենք» ոտանաւորը և Ֆրանսերէն
Ալֆօս Դոպէի «Les prunes» հեղինակութիւնը:

II

Տօլստօի «Յարութիւն» վէպի փոխադրու-
թիւնը, որի մասին խօսեցինք մեր տեսութիւն-
ներից մէկում, իբրև պիէս հաւանութիւն չէ
գտնում հասարակութեան կողմից: Արքեմիդի
փոխադրութիւնը նորից դրվից բեմի վրա ուր-
աւթ օր, զեկտեմբերի 17-ին: Տեսարանների
մի բանիւր իբրև առանձին պատկերներ հե-
տաքրքրական են, բայց պիէսը իբրև ամբող-
ջութիւն չէ գոհացնում հանդիսականներին:
Ներկայ սեզոնի այդ նորութիւնը, այդպիսով
տեղեկանալի նշանակութիւն չունեցաւ: Տօլս-
տօյի նշանաւոր վէպի համար հարկաւոր էին
աւելի հմուտ փոխադրութիւն և նիւթի մշա-
կութեան համար աւելի նպաստաւոր պայման-
ներ:

III

Երգչուհի Պապայանն երէկ, շաբաթ օր, դեկ-
տեմբերի 18-ին, հանդէս եկաւ Վերդիի «Րի-
գօլլետտո» օպերայում: Զինգայի դերի մէջ և
տպաւորութիւն գործեց իրան յատուկ արժա-
նաւորութիւններով:

Վալը, երկուշաբթի օր, դեկտեմբերի 20-ին,
նշանակված է Պապայանի բեմադրութիւնը: Նա
գուրս կը գայ Զուլիետտայի դերում: Գոնօի
«Րօմէո և Զուլիետտա» օպերայի մէջ:

IV

Մեկ խնդրում են յայտնել, որ Հայոց Դրա-
մատիկան Ընկերութեան վերջին անգամ
տուած ներկայացումը ի նպաստ ընկերութեան
տունը է դուռ արդէնք մօտ 900 ռուբլի:

Հայոց Դրամատիկան Ընկերութեան վար-
չութիւնը, ինչպէս լսում ենք, որոշել է եկող
տարվայ փետրվար ամսին տօնել տիկին Սի-
րանոյշի բեմական գործունէութեան երեսուն-
ամեակը:

V

Դեկտեմբերի 28-ին, Արտիստական ընկե-
րեան դահլիճում, ցերեկվայ ժամը 1-ից յօ-
գուտ թիֆլիսի Հայոց Բարեգործական ընկե-
րութեան «Երեկոյեան» ձրի եւ համապիս-
տատեցի տրվելու է մի բազմաթիւանդակ և
ճոխ մանկական հանգիստ էլէկտրական տօնա-
ճառով: Հանգիստը լինելու է շքեղ, դրվելու են
մանկական խաղեր և զուարճութիւններ,
հանդիսաւոր գնացք դրօշակներով, էլէկտրա-
կան լոյսի էֆֆեկտներ, էլէկտրական վրան և
քիօսկներ, լինելու է «բաղլի շիւ» և հակա-
ռէթուս մրցանակով և այլն: Մրցանակը տա-
նորն ստանում է անէ ժընօն, Հայոց Բարե-
գործական ընկերութեան մակագրութիւնով:

Առհասարակ հանգիստը խոստանում է լինել
շատ հետաքրքիր: Ցանկալի էր, որ հասարա-
կութիւնը իր երեխաներով այցելէր այդ ման-
կական հանգիստին, որով իրանց երեխաներին
այս տօներին անմեղ և էստէթիկական դուար-
ճութիւն պատճառելով հանդիմ, նպաստած
կը լինէին Բարեգործական ընկերութեան
ձրի և էֆանագին ճաշարանի բարգա-
ւաճման, և հնարաւորութիւն կը տային Բա-
րեգործական ընկերութեան ընդլայնելու ճա-
շարանի գործունէութիւնը այդ հիմնարկու-
թեանը դիմող բազմաթիւ չըբաւոր երեխաների
համար: Տօնածառի ցերեկոյթին մասնակցելու
մուտքը երեխաների համար արժէ 50 կօպէկ:
մեծերի համար 75 կօպէկ:

ԲԺ. Գ. ԿՈՃԱԿԱՆՈՒՄՆԻ ՅԵՇՄԱՍԿԻՆ
(Նամակ Բալխանից)

«Մշակի» № 274-ում Կողմանից մի տրի-
բալի լուր էր հաղորդված—բժշկ Կաճկա-
նանի մահը:

Ներկայ նամակովս կամենում եմ խօսել այդ
անձնուանալի բժշկի մասին այն, ինչ որ պար-
տաւոր է սակ նրան մօտ ծանօթ ամեն մի
մարդ:

1899 տարվայ առաջին կէսից մեզ մօտ,
Բալխանի, նոր պաշտօն հիմնվեց—սանիտա-
րական բժշկի և այդ պաշտօնում առաջինը
բժշկը նշանակվեց բժ. Կաճկանանը, այն ծե-
րուկը, որը մինչև օրս իր կարճ ծառայու-
թեան միջոցում թողեց անմոռանալի յիշողու-
թիւն մեր մէջ: Նա այստեղ մի բանի ամիս
ծառայելուց յետոյ, թողեց իր պաշտօնը հի-
ւանդութեան պատճառով: Սանիտարական
բժշկի պաշտօնը, ինչպէս յայտնի է, առհասա-
րակ շատ ծանր է և պատասխանատու, մա-
նաւանդ մեզ մօտ աւելի ծանր է, որովհետեւ
մեզ մօտ ամենաուժեղ փոխն է:

Նշանակված բժշկ Կաճկանանը պէտք է
միայնակ կուէր հարկւրաւոր ոյժերի դէմ, որ
կարողանար ազատել ցեխից, կեղտից և խա-
ւարից այն հազարաւոր բանւոր և արհեստա-
ւոր դասակարգը, որ մինչև այդ օրը միայն
լսել էր լոյսի, մարբութեան և մարդավարի
կեանքի անունները, բայց դեռ չէր տեսել
լոյս էլ չունէր տեսնել:

Առաջին յոյս տուող ապագայ մարդավարի
կեանքի—այդ բանւոր և արհեստաւոր մարդ-
կանց, որոնք թաւալում էին կեղտոտ և խոն-
ված բնակարաններում, որոնք կերակրվում
էին ամեն ինչով, եղաւ բժ. Կաճկանանը:

Հեռու չէր միայնակ մէկ մարդու համար
չորս օգնականներով (санитарные надзирате-
ли) պատերազմի մեր ամբողջ հասարակու-
թեան դէմ, որ դեռ սովոր չէր, որ մէկ կողմ-
նալի անկող մարդ միշտմէր իր սեփական
նիստ ու կացին և իր զայնածաւալ իրաւուն-
քի» գործերում: Մանաւանդ մեր նաւթային
տուգերի ներկայացուցիչների համար բոլորո-
վին անտուրական էին ստանալ որ և իցէ
մէկի հրաման, չը կատարել այս կամ այն
սանիտարական պահանջները: Այդ պարոնները
միշտ սովոր են իրանց հրամայել, իսկ լսել
հրաման, այն էլ մէկ բժշկից—գա խորթ էր
նրանց համար և յաճախ ընդհարում էր լի-
նում բժշկի և «խօզիներին» մէջ:

Այո, շատ դժուար էր այդ պաշտօնը բժ.
Կաճկանանին համար, որը արդէն ծերացել էր,
կազմուածքով թոյլ էր և ջղային: Այդ պատ-
ճառով նա, զգաւորաւոր չը կարողացաւ եր-
կար դիմանալ նրան դիմագրող ոյժերի և
ստիպված էր թողնել կուի դաշտը ու հեռա-
նալ մեզինց սաստիկ քայքայված և թուլացած:
Բայց, չը նայած այդ դժուար պայմաններին,
նա կարողացաւ կարճ միջոցում կատարել
այն, ինչ որ ուրիշները չէին կարող մի բանի
տարվայ ընթացքում:

Բժ. Կաճկանանը հեռացաւ այստեղից տրի-
բաժ, որովհետեւ իր սկսած գործը կիրականաւոր
թողից:

1900 թւին, փետրվարի 29-ին բժ. Կաճկա-
նանը իր նամակի մէջ ահա թէ ինչ էր գը-
րում ինձ, ի միջի այդոց.

«...Ես հալածված մի աղքատ եմ, սակայն
հարուստ եմ իմ նախկին գործակիցներին հա-
մակրութեամբ... Այդու թ ճակատագիրը, որ
իշտ հալածել է ինձ, չը թոյլ տուեց, որ ես
մի քանի տարի ծառայեմ Բալխանում, այն
ժամանակ դուք կը տեսնէիք թէ ինչ կանէր
ձեր ծերուկ բժիշկը... Հեղուկ յօժար է, մար-
միտս տկար...»

Սանիտարական բժշկը Բալխանում կամ
պէտք է հաշտ վարվի միլիոնատերերի հետ և
հետևապէս թոյլ վարվի պաշտօնում, կամ արի-
լինի, իսկ արիւնքստիմ նա շատ ընդհարու-
ման առաջ կը բերէ: Մի խօսքով այդ պաշտօ-
նում չէ կարելի, ինչպէս հայերը ասում են
«համ նախին», համ մեխին խփել...»

Լսել ես, որ ինձ նշանակել են ուսումնաբա-
նի բժիշկ (Բազու) ճիշդ է, ես խնդրել եմ,
բայց յոյս չունեմ...»

Այդ նամակից յետոյ մենք կրկին տեսնու-
ցինք մի տարի անցած, Բազուում, ուր բժիշկը
եկել էր իր գործերով, իսկ երկրորդ անգամ
եկել էր իր եղբոր Աստուածատրի թաղմանը:
Բժ. Կաճկանանը այդ ժամանակը դեռ յոյս
ունէր, որ կը մնայ Բազու ծառայելու, բայց
չեղաւ:

Այժմ չը կայ այս աշխարհում այն ազնիւ
և բաշտաւոր մարդը, որը միայն «մէխին էր
խփում»:

Ա. Մ. Մկրտումեան

ԵՐԱԿԱՅԻՑ ԹԻՖԼԻՍ ԲԵՐՈՂՈՂ ԶՐԱՆՑՔԻ
ՄԱՍԻՆ

II

Անցնենք ինժեներ Մեցի ծրագրին:
Ինչպիսի պայմաններում է գտնվում թիֆ-
լիսը Երաւայի ջրանցքի տեսակէտից: Արդեօք
ընտելւել նպաստում է, թէ խանգարում է
հարցի լուծմանը: Կարելի է օգտվել բնական
այդ խնկական աղբիւրներից՝ առանց մեծա-
քանակ նիւթական գոհերի, և վերջապէս այդ
ձեռնարկութիւնը արդիւնաւէտ է տնտեսակա-
նի կողմից:

Ահա այն հարցերը, որոնց հետազոտութեան,
լուսաբանութեան և մանրակրկիտ ուսումնա-
սիրութեան արգասիքն է Մեցի կազմած նա-
խաճագիրը, «avant projet»-ը:

Մենք կաշխատենք մի համառօտ, բայց
պարզ հասկացողութիւն տալ այդ ծրագրի մա-
սին:

Երաւայի աղբիւրները գտնվում են թիֆլի-
սից դէպի արեւմուտք մօտաւորապէս 95
վերստ հեռավորութեան վրա և բաղկացած են
Ղըզլ-Բիլիսայի, Գունիա-Օդուս և Վանքա-
ձորի աղբիւրներից. նախնական հետազոտու-
թիւններից ցոյց են տուել, որ բոլոր աղբիւր-
ներից օրական մօտ 20 միլիօն վեղքօ ջուր է
բղխում, և Ղըզլ-Բիլիսայ տալիս է 10 միլիօն,
Վանքաձորը—3,86 միլիօն, Գունիա Օդուսին 5,6
միլիօն:

Ներկայումս թիֆլիսում գործ են ածում ամե-
նաշատը 840 հազար վեղքօ: Համարելով թիֆլիսի
բնակչւնքի թիւը 200 հազար, կը տեսնենք,
որ ամեն մի բնակչի վրա ընկնում է 4,2 վեղ-
քօ: Այս ջրի մի մասը բնակչւնքը գնում են
փողով, իսկ մնացած մասը՝ ձրիապէս է բա-
ժանվում, փողոցներն են ջրում և այլն: Քա-
ղաքային ջրանցքը տարեկան ծախսում է 260
հազար ռուբլու ջուր: Հաշուելով 5 վեղքօն մէկ
կօպէկով, կը գտնենք, որ ամեն մի բնակիչ
օրական բանեցնում է 1,7 վեղքօ դրամով գը-
նած ջուր: Բարեկարգ բաղաճնների վիճակա-
գրութիւնը ցոյց է տալիս, որ ամեն մի բնա-
կիչ միջին թուով օրական պիտի բանեցնէ 12
վեղքօ: Ընդունելով, որ ապագայում քաղաքիս
բնակչւնքի թիւը աւելանալու է, ինժեներ Մե-
ցի իր ջրանցքը հաշուել է 300,000 բնակչի հա-
մար և գտել է, որ միմիայն գործածութեան
համար հարկաւոր է 3,6 միլիօն վեղքօ ջուր:
Բացի դրանից քաղաքը ունի ուրիշ կարեւոր
պահանջներ, այն է՝ էլէկտրական էներգիայի
և հողերի ոռոգման կարիքը: Հէնց 200 հազար
բնակչւնքին էլէկտրականութիւն մատակա-
րարելու համար այժմ անհրաժեշտ է 4200
ձիու ոյժ ունեցող կայարաններ: Էլէկտրական
կարիք ասելով պիտի հասկանալ՝ էլէկտրա-
քաղաք, փողոցային և անային լուսաւորութիւ-
նը և քաղաքում բանող բոլոր մեքենաները,
ահա այս բոլորին շարժելու, բանեցնելու հա-
մար էլէկտրականութիւն պիտի արտադրել:
Ապագայում այդ պահանջը կը կրկնապատկի
և կը եռապատկի, ինչպէս ցոյց է տալիս
դարձեալ ուրիշ քաղաքների վիճակագրութիւնը:
Նաւթիւղում գտնվող քաղաքային հողերը
ոռոգելու համար հարկաւոր է ամենաքիչը մօտ
4 միլիօն վեղքօ:

Կողմնակիքները մաքրելու և այլ պահանջների
համար հարկաւոր է 2—4 միլիօն վեղքօ: Այն-
պէս որ ապագայում քաղաքի ընդարձակվե-
լուց յետոյ անհրաժեշտ է ունենալ օրական
մօտ 10 միլիօն վեղքօ ջուր:

Ինքնընտանեան հարց է ծագում, այդչափ
ջուր ունենալուց յետոյ ջրաբաշխական կայա-
րաններ էլ չին, եթէ միայն բնական նպաս-
տաւոր պայմաններ լինեն:

Ինժեներ Մեցի չափ ու ձեւից երեւցել է,
որ Երաւայի աղբիւրները անչափ բարձր են
թիֆլիսի մակերևոյթից, մօտաւորապէս 1 կի-
լօմէտը (470 սոժէն), այն է՝ վերոյիշալով աղ-
բիւրները Սև ծովից բարձր են 1540—1600
մէտը, իսկ քաղաքային ջրամբարները նոյն
ծովից 500—600 մէտը են բարձր:

Հիմա երեւակայեցէք 20 միլիօն վեղքօ ջուրը
1 կիլօմէտը բարձրութիւնից թափվելին, որ-
պիսի հսկայական ոյժ է ներկայացնում: Մօ-
տաւոր հաշիւները համաձայն այս ջրի բնական
ոյժը ընդունակ է 24 հազար ձիու ոյժ տալ և
այն էլ միշտ ու անընդհատ:

Չը նայելով որ Երաւայի աղբիւրները 20 մի-
լիօն վեղքօ ջուր են տալիս, այնուամենայնիւ ին-
ժեներ Մեցի իրան յատուկ զգուշութեամբ ջը-
րանցքի ծրագիրը կազմել է միայն 10,5 միլիօնի
համար, 11,100 ձիու ոյժ ունեցող էլէկտրական
ջրաբաշխական կայարաններով: Հետեւենք
այժմ Երաւայի ջրանցքի ուղղութեամբ՝ սկզբից
մինչև թիֆլիս, տալով նրա համառօտ նկարա-
գրութիւնը և չափերը:

Ղըզլ-Բիլիսայ գիւղից վերեւ, այն է 1560 մետր
բարձրութիւնից (հաշուած Սև ծովի մակերե-
ւոյթից) գտնագտն պատմեցնել, անջրպետ-
ների ու շինութիւնների օգնութեամբ կը հա-
ւաքվեն Ղըզլ-Բիլիսայի աղբիւրները և կը
մտնեն ընդհանուր խողովակը:

Ջրանցքի սկզբին կը գրվին առանձին ուղ-
ղիչ գործիքներ, որոնց շնորհիւ միայն որոշ
քանակութեան ջուր կանցնի խողովակը, իսկ
աւելորդ ջուրը կը գնայ այլ ուղղութեամբ:
Այդտեղից մինչև Ջինիս գիւղը (5 կիլօմէտը)
կը շինվի չուգունէ խողովակ, Ջինիսից մինչև
Կիշիներ ձորակի անջրպետը (25,12 կիլօ-
մէտը)—բետոնի (աւաղի, խճի ու ցեմենտի
զանգուածից շինած), յետոյ կը լինի տունէլ
(9,14 կիլօմէտ):

Տունէլից դուրս գալով, դեղին սարի լան-
ջով կանցնի մինչև Ալգետկայ գետի հովիտը
(5,52 կիլօմէտը): Ալգետկայի հովիտով կանցնի
Մանգլիսեան մօժ սիֆօնը (6,88 կիլօմէտը),
որի ծայրի ու ամենացածր կէտերի զանազա-
նութիւնը ուղղահայաց տեսակէտից, կը լինի
470 մետր: Ամենաստոր կէտում արարալիւի
ձուռն կը լինի, այդ պատճառով էլ ամբողջ
սիֆօնը շինվելու է երկաթեայ խողովակներից:
Մանգլիսեան սիֆօնից Մոգրիսի գիւղի միջով
մինչև Ապաստարանի սիֆօնը (12,37 կիլօմէտ.)
ջրանցքը կանցնի հարթ տեղերով, մի քանի
մետր մուկը ձորակներում կը շինվին փոքր
սիֆօններ: Այստեղից ջրանցքը խառու ուղ-
ղութեամբ (20 կիլօմէտը) անցնում է Ապաս-
տարանի, Տանձի անտառի ու Սպիտակ Դու-
խանի ձորակներով մինչև Աղբաշխանեան լեռը:
Այս տարածութեան վրա ջրանցքը բաղկացած
կը լինի երկաթեայ խողովակներից և կունե-
նայ հետեւեալ երեք սիֆօնները՝ Ապաստարա-
նի մօտ (9,55 կիլօմէտ.), Տանձային անտառի
(4,26 կիլօմէտ.) ու Սպիտակ Դուխանի (3,84
կիլօմէտ.): Աղբաշխանեան սարի լանջին, 1400
մետր բարձրութեան վրա կը կառուցվի առա-
ջին ջրաբաշխական կայարանի ջրամբարը: Այս
ջրամբարից առանձին խողովակով ջուր կը
մատակարարվի և Կօջօրին: Մինչև այստեղ
ջրանցքը կունենայ 85,08 կիլօմէտը երկարու-
թիւն, որից 42,9 կիլօմէտը կանցնի հարթ
տարածութեամբ, 9,14 կիլօմէտը տուններով
և 33,04 կիլօմէտը երկաթեայ խողովակներով
և սիֆօններով: Այս ջրամբարից կը շինվին
երկու խողովակներ 1,7 կիլօմէտը երկարու-
թեամբ. առաջինի միջից ջուրը կը տարվի դէպի
առաջին ջրաբաշխական կայարանը, իսկ երկ-
րորդով աւելորդ ջուրը կանցնի դէպի երկրորդ
ջրամբարը: Առաջին կայարանը կը շինվի Աղ-
բաշխանի սարից դէպի Միւնէթ ձգվող ձորա-
կում, մօտաւորապէս այդ երկուսի մէջ տեղը
1090 մետր բարձրութեան վրա:

(Կը շարունակվի)

ՆԱՄԱԿ ԽՄԲԱՐՈՒԹԵԱՆ

Լուգանսկի, դեկտեմբերի 2-ին

Տեղիս Աճմեան քրտանիքը՝ որը ծխական
առունին օգտաւոր գործերում միշտ օրինակե-
լի է հանդիսացել Լուգանսկի անհամեմատ հա-
րուստ հայ աղաներին, անցող նոյեմբերի
19-ի իր խնամած օրիորդի պատկարութեան
ուրախութեան ժամին, չը մոռանալով դրսի
մերկ ու կարօտ հայ առաքապաններին, այ-
սօր ինձ յանձնեց 60 արշին (сә-
теп), 65 արշին բամբակ և 25 ռուբ-
լի, հասցնելու կարօտեալներին: Գտնելով ա-
ւելի անհրաժեշտ թիֆլիսի հայ կարօտա-
լիներին օգնութիւնը, ուղարկում եմ Աճմեան
տան վերոյիշալով բարի տուրքը մեծապատիւ
խմբագրութեանը. խնամարար խնդրում եմ
ձեզ, ձեր բարի և վերահաս հայեցողութեամբ
բաժանէք 125 արշին հագուստեղէնը՝ և 25
ռուբլին խմբագրութիւնից օգնութիւն հայոց
կարօտեալներին, որպէս «Նոր Տարվայ» նշէր:

Մի անգամ ես գովելով Աճմեաններին օրինա-
կելի յատկութիւնը, որ նրանք ընդունակ են
հասկանալու թշուառների կարիքը, հրաւիրում
ենք մեր մնացած աղաների ուղարկութիւնը՝
դէպի իրական դժբալի կեանքը: Իսկ սրա համար
պէտք է միշտ հասարակական փոքր և մեծ
հոգսերի հոգաւորութիւն՝ ըստ կարողութեան:

Ներսէս քան. Հեթմեկեան

ԲՐԻ զործադրութեան մտնելու ժամանակը։
Յամենայն դէպս դաշնագիրները հրատարակե-
լու և զործադրութեան մացնելու միջև բաւա-
կան ժամանակ կը տրվի, որպէս զի շահա-
զրգոված անձերին հնար տրված էինք յար-
մարելու նոր պայմաններին։

Ս. ՊԵՏԵՐՅԱՆԻՐԳԻ ԲՕՐՍԱՆ
17 ՂԵԿԼԱՆԴԵՐԻ
ԲՕՐԱՅԻՐԻ ՊԻՍԿՈՆԱՐ 6—7¹/₂ 0

(4. 5. 4.) 3—3

Կատարվում են շուտ և կանոնավոր:

